Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՌՈԲԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում ապրող հայ բնակչության թվաքանակի հարցը յուրահատուկ տեղ է գրավում հայ-թուրքական փոխհարաբերությունների՝ 1915թ. Հայոց ցեղասպանության պատմությունը լուսաբանող թուրքական պատմագրության նենգափոխումների շարքում, հանդիսանալով Մեծ եղեռնի ժխտման հիմնափաստարկներից մեկը:

Նպատակն ակնհայտ է՝ ապացուցել, ինչպես գրում է թուրքոֆիլ պատմաբան Ջասքին Մաքքարթին, որ «ժողովրդագրության տեսանկյունից որևէ Հայաստան Օսմանյան կայսրությունում գոյություն չուներ», իսկ «Արևելյան Անատոլիայում» հայկական պետության մասին կարելի կլիներ խոսել միայն այն դեպքում, երբ երկրամասից վտարվեր բնակչության 75%-ը կազմող մահմեդական տարրը: «Վիճակագրական ճշգրիտ հաշվարկները ցույց են տալիս, - շարունակում է նա, - որ որևէ ցեղասպանություն տեղի չի ունեցել... Հայերի ճնշող մեծամասնությունը սովամահ է եղել, կամ էլ մահացել է տիֆից և խոլերայից, այլ ոչ թե նախօրոք կանխամտածված ցեղասպանությունից»:[1]

Ըստ սփյուռքահայ պատմաբան Լևոն Վարդանի կազմած մատենագիտության՝ առ 1998թ. լույս է տեսել թուրք հեղինակներիի շուրջ 639 գիրք, որոնք առնչվում են Հայոց ցեղասպանության և հայ-թուրքական փոխհարաբերությունների պատմությանը:[2] Այդ ուսումնասիրությունների մեծ մասն այս կամ այն կերպ շոշափում են նաև խնդրո առարկա հարցը: Այդքանով իսկ հարկ է կրկին անգամ անդրադառնալ Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակի հարցի լուսաբանման թուրքական պատմագրության հիմնական միտումներին:

Օսմանյան Թուրքիայում առաջին պաշտոնական մարդահամարն անց է կացվել 1844թ., Աբդուլ-Ազիզ սուլթանի օրոք: Այդ մարդահամարի տվյալներով կայսրությունում բնակվում էր շուրջ 2 400 000 հայ:[3] Այս թիվը մինչև 19-րդ դարի 70-ական թթ. պաշտոնապես ընդունվում էր կառավարության կողմից. այն նաև տրամադրվում էր թուրքական վիճա-

կագրությամբ հետաքրքրվող առանձին եվրոպական հեղինակներին, օրինակ՝ ՈՒբիչինիին (1853թ.):[4] Ավելին՝ համաձայն որոշ թուրքական սալնամեների (նահանգների մակարդակով հրատարակվող տարեկան տեղեկագրեր) հայերի թվաքանակը հասնում էր 3 մլն. 500 հազարի:[5]

Դեռ 1870թ., ըստ օսմանական պաշտոնական սալնամեների, Ասիական Թուրքիայում ապրում էր 17.216.000 մարդ, որից 3.600.000-ը հայ էր:[6]

Սակայն վիճակը փոխվում է, երբ Օսմանյան կառավարությունը 1878թ. կնքված Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով պարտավորվեց «առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցած բարելավումները ու բարենորոգումները»:[7] Բարձր Դուռը, ջանալով ապացուցել, որ այսպես կոչված «հայաբնակ մարզերում» հայերը կազմում էին ընդհանուր բնակչության չնչին փոքրամասնությունը, սկսեցին Թուրքիայում եվրոպական դեսպանությունները հեղեղել իրենց իսկ կողմից անցկացրած «մարդահամարների» արդյունքում ստացված շինծու թվերով: Հայտարարվում էր, որ Արևմտյան Հայաստանում բնակվում է ոչ ավել քան 600000-700000 մարդ: Վիճակագրության կեղծումը կատարվում էր սուլթան Աբդուլ-Համիդ II-ի անմիջական հրահանգներով: Օրինակ, 1881/82-1893թթ. մարդահամարի արդյունքների ամփոփման կապակցությամբ իր գլխավոր վեզիր Ահմեդ Ջևադին 1895թ. գարնանն ուղղված հուշագրում բռնակալը, խոսելով Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի թվաքանակի մասին, մերժում է վարչապետի ներկայացրած 900000 թիվը որպես չափազանցություն:[8]

Թուրքական պատմաբանները հաճույքով են մեջբերում օտարերկրյա դիվանագետների հետ զրույցներում Աբդուլ-Համիդի կողմից հաճախ արվող, որևէ քննադատության չդիմացող, այն հայտարարությունները, որ անգամ երկրի առավել խիտ բնակեցված մասերում հայերը կազմում են բնակչության միայն 3%-ը, իսկ ողջ հայ ազգաբնակչությունը երբեք չի գերազանցել 450 000-ը:[9]

Դեպքերի ժամանակակից թուրք հեղինակ Հուսեյն Քյազիմ Քադրին խոստովանում է , որ հայ բնակչության վիճակագրության պաշտոնական թվերը կազմվում էին միտումնավոր խարդախությամբ. «Աբդուլ-Համիդի գահակալության տարիներին մենք նվազեցնում էինք հայ բնակչության թվերը.., - գրում է նա և շարունակում: - Աբդուլ-Համիդի հրամանով հայերի թվաքանակը միտումնավոր կերպով ներկայացվում էր իրականից ցածր»:[10]

Վիճակագրական տվյալների կեղծման մասին մի վկայություն է առկա, մասնավորապես, Սարգիս և Միսակ Բդեյանների «Հարազատ պատմություն Տարոնո» գրքում:[11] Ստանալով Ներսես Վարժապետյան պատրիարքի հրամանով 1880թ. Տարոնում անցկացրած մարդահամարի նախնական տվյալները, ըստ որի թուրքերի թիվը Մուշի, Բուլանըքի և Մանազկերտի շրջաններում 55000, իսկ հայերի թիվը 225000 էր, տեղի թուրք պաշտոնյաները «համոզեցին» Մուշի քաղաքային ժողովի անդամներից մեկին՝ Կարապետ էֆենդի Փոքիկյանին, որպեսզի նա այդ մեծ թիվը նվազ ցույց տա: Փոքիկյանն էլ իր հերթին «համոզելով» քաղաքային խորհրդի այլ անդամներին հայերի թիվը նվազեցրեց մինչև 95000, իսկ թուրքերի թիվը բարձրացրեց մինչև 105000-ը:

Նման գործելակերպը տալիս էր իր սպասված պտուղները: Ըստ վերը նշված՝ 1881/82-1893 թվականներին անցկացված թուրքական պաշտոնական մարդահամարի տվյալների Օսմանյան կայսրությունում նախկին

2400000-ի փոխարեն պաշտոնապես ապրում էր արդեն 1157519 հայ:[12]

Հետագայում՝ 1905թ., հայ բնակչության թիվը «մեծահոգաբար» ավելացվեց 15714-ով, հասցվելով 1173233-ի, իսկ 1914թ.՝ ևս 121618-ով: Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ըստ օսմանյան պաշտոնական վիճակագրության կայսրությունում ապրում էր 1294851 հայ:[13] Նույն այս տվյալներն էին օգտագործում արդեն հետպատերազմյա թուրքական կառավարությունները, երբ Վերսալում, Սևրում և Լոզանում կատաղի քաղաքական-դիվանագիտական պայքար էին մղում՝ փորձելով հիմնավորել իրենց հավակնությունները Արևմտյան Հայաստանի նկատմամբ:

Օսմանյան մարդահամարների տվյալներն առայսօր լայնորեն օգտագործվում են թուրքական պատմագրության կողմից: Ոմանք դրանք ընդունում են առանց քննադատության, չփորձելով անգամ որևէ փաստարկով հիմնավորել դրանց հավաստիությունը (Յաման, Ուրաս, Քոչաշ), ոմանք փորձում են հիմնավորել դրանք՝ օգտագործելով առանձին միտումնավոր եվրոպական աղբյուրներ, որոնց տեղեկություններն ըստ էության չունեն առանձին նշանակություն և բխում են նույն օսմանյան վիճակագրությունից (Գյուրուն), ոմանք էլ, հատկապես 70-80-ական թթ. սկսած, գործում են ավելի նուրբ՝ որդեգրելով կեղծ գիտական մեթոդներ (Կարպատ):

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում ապրող հայերի թվաքանակի խնդիրը թուրքական պատմաբաններից առաջինը հանգամանալից քննեց Էսատ Ուրասը իր 1950թ. հրատարակված, 1986թ. վերահրատարակված, իսկ 1988թ. անգլերեն լեզվով լույս տեսած «Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը» ծավալուն աշխատությունում:[14] Այս, թուրքական պատմագրության համար կարելի է ասել հրահանգային բնույթ կրող երկում, որի հիմնադրույթները գրեթե անփոփոխ կերպով շրջում են թուրք պատմաբանների աշխատություններից մեկից մյուսը, սահմանվում են նաև հայ բնակչության թվաքանակի խնդրի լուսաբանման այն մոտեցումները, մեթոդները և եղանակները, որոնք թուրքական պատմագրության զինանոցում են գտնվում առ այսօր:

Ուրասն իր աշխատության խնդրո առարկա հարցին նվիրված հատվածում ընթերցողին բառացիորեն հեղեղում է տարբեր հեղինակներից և աղբյուրներից քաղած «վիճակագրական» տվյալներով (Բասմաջյան, Քոնտենսոն, Գելցեր, Թրոտտեր, Թոփչյան, Լինչ, Ներսես Վարժապետյան, Խատիսյան, Գ. Ասլան, Օրմանյան, Մարսել Լեար (Գ. Զոհրաբի ծածկանունն է), Վիտալ Քինե, ֆրանսիական դիվանագիտական «Դեղին գիրք» և, վերջապես, Օսմանյան պաշտոնական վիճակագրության տվյալները): Նյութը համակարգված չէ, չի պահպանված ժամանակագրական հերթականությունը և հաճախ չի նշված անգամ աղբյուրի հրատարակման տեղն ու թվականը:

Դիցուկ մեկ օրինակ. հեղինակն այս թվարկման մեջ զետեղել է Խատիսյանի՝ հայ բնակչության 1918թ. հետեղեռնյա վիճակագրությունը, համաձայն որի Օսմանյան Թուրքիայում մնացել էր 281000 հայ, առանց որևէ չնչին իսկ ակնարկի, թե այդ թիվը որ տարվա իրողությունն է արտացոլում:[15] Ուրասը տարբերություն չի դնում Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթների և ողջ Փոքր Ասիայի միջև. համենայն դեպս արևմտյան և ռուս ուսումնասիրողների տվյալները հանրագումարող աղյուսակում թուրք

պատմաբանը Արևմտյան Հայաստանի համար նրանց կատարված հաշվարկները ներկայացնում է որպես ամբողջ Փոքր Ասիայի հայ բնակչության թիվն արտացոլող տվյալներ:[16]

Ուրասի հայացքները հետագա զարգացումն են ստանում 1959թ. հրատարակված պրոֆ. Թայիբ Գյոքբիլգինի «Ազգային պայքարի սկիզբը. Մուդրոսի զինադադարից մինչև Սիվասի կոնգրես» և Անկարայում արդեն 1967թ. լույս տեսած՝ Սաղի Քոչաշի «Հայերը պատմության ընթացքում և թուրք-հայկական հարաբերությունները» ուսումնասիրություններում:[17]

«Պատմության ողջ ընթացքում, - գրում է Գյոքբիլգինը հետևելով Ուրասին, - թուրքերի հայրենիք հանդիսացող արևելյան վիլայեթներում հայերը կազմում էին աննշան փոքրամասնություն»:[18]

Պատմաբանը, ներկայացնելով Արևմտյան Հայաստանում բնակվող հայերի և մահմեդականների հարաբերակցության վերաբերյալ իբր թե եվրոպական վիճակագրությունից քաղված տվյալներ, «մոռանում է» նշել որևէ աղբյուր. «Նախքան պատերազմը, - հայտարարում է Գյոքբիլգինը, - այստեղ 4.000.000 մահմեդական բնակչության դիմաց կար 600.000 քրիստոնյա»:[19]

Ինչպես նկատում է այս առթիվ անվանի պատմաբան Ռ. Սահակյանը, թուրք ազգաբնակչության թիվը մահմեդական ողջ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակում ներկայացնելու միտումը բնորոշ է թուրք պատմաբանների մեծամասնության համար, որոնք դրանով միայն նպատակ են հետապնդում թաքցնել մահմեդական թուրքերի թիվը յուրաքանչյուր վիլայեթում, մի բան, որ ակներևորեն կարող է ցույց տալ, որ թուրքերը միշտ էլ փոքրամասնություն են կազմել:[20]

Անդրադառնալով առանձին նահանգների բնակչության թվային կազմին՝ Գյոքբիլգինը հայտարարում է, որ Էրզրումի և Բիթլիսի վիլայեթներում թուրքական տարրի գերակայությունն անվիճելի փաստ է, իսկ Դիարբեքիրի վիլայեթում հայերի ընդհանուր թիվը չէր հասնում անգամ 5%-ի, կազմելով բնակչության 3,5%-ը:[21]

Նման մոտեցում է ցուցաբերում այս հարցում Քոչաշը, որը, հետևելով Ուրասին, կառչում է նույն տխրահռչակ 1294851 թվից: Նա ջանում է ապացուցել, որ հայերը Արևմտյան Հայաստանում կազմում էին բնակչության ընդհանուր թվի 13%-ից ոչ ավելին և դժվար էր անգամ մեկ վիլայեթի սահմաններում գտնել լոկ մեկ գավառ, ուր հայերը մեծամասնություն էին կազմում:[22]

1970-ական թթ.-ից սկսած թուրքական կառավարությունը որդեգրեց առավել ակտիվ հակահայկական քաղաքականություն, այդ թվում նաև պատմագիտության դաշտում: Զարկ տրվեց Հայկական հարցով զբաղվող թուրք պատմաբանների նոր սերնդի պատրաստմանը և նրանց վերապատրաստմանը արտասահմանում, թուրք հեղինակների աշխատությունների եվրոպական լեզուներով հրատարարակմանը: Միաժամանակ որոշակի աշխատանք կատարվեց արևմտյան պատմագիտական շրջանների պատվիրակման և դրանց թուրքամետ դիրքորոշման խրախուսման ուղղությամբ: Մեծ գումարներ հատկացվեցին ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի համալսարաններում թուրքագիտության ամբիոնների բացմանը, որոնց ղեկավարներ նշանակվեցին թուրքամետ գիտնականներ:

Թուրքական կառավարության ջանքերի շնորհիվ Արևմուտքում դիտվեց թուրքամետ ռեվիզիոնիզմի աննախադեպ ծաղկում, որը շարու-

նակվում է առ այսօր:[23] Ռեվիզիոնիզմը բուն դրեց անգամ ամերիկյան այնպիսի հեղինակավոր ամսագրում ինչպիսին է IJMES-ը (Մերձավոր Արևելքի Ուսումնասիրությունների Միջազգային Ամսագիր), որն իր էջերը սկսեց տրամադրել թուրքական հեղինակների նորանոր կեղծիքներին: 1970-ական թթ. այդ հանդեսի գլխավոր խմբագրի պաշտոնն էր զբաղեցնում Սթենֆորդ Շոուն, որը վայելում է թուրքական պատմության խոշորագույն մասնագետներից մեկի համբավը: 1977թ. նա իր՝ ազգությամբ թուրք կնոջ հետ միասին հրատարակեց «Օսմանյան կայսրության և ժամանակակից Թուրքիայի պատմությունը» երկհատորանոց աշխատությունը, ուր նա փորձում է գիտական հիմնավորումներ տալ նաև հայ բանկչության վիճակագրության նենգափոխումներին, նշելով, որ Օսմանյան կայսրությունում նախքան պատերազմն ապրում էր ամենաշատը 1300000 հայ: Մեծ եղեռնը բնութագրելով որպես վերաբնակեցում՝ Շոուն գտնում է, որ վերաբնակեցվածների թիվը կազմում էր ոչ ավել քան 400000 մարդ, ներառյալ նաև այն հայ ահաբեկիչների և ագիտատորների, որոնք ապրում էին սահմանամերձ քաղաքներում: Իսկ տեղափոխման ընթացքում մահացել է շուրջ 200000 մարդ, որոնք, զոհվել են ինչպես սովի, համաճարակների, այնպես էլ պատերազմական դրությունից բխող այլ պատճառներից: Նույն այդ պատճառները, շտապում է ավելացնել պատմաբանը, խլել են 2000000 մահմեդականների կյանք:[24]

70-80-ական թթ. արևմտյան ակադեմիական լայն շրջաններ մուտք գործեցին օսմանյան պատմական վիճակագրությամբ զբաղվող նաև որոշ թուրք պատմաբաններ, որոնցից ամենահայտնին Քեմալ Կարպատն է, իր «Օսմանյան բնակչության հաշվառումը և 1881/82-1893թթ. մարդահամարը» հոդվածով և «Օսմանյան բնակչությունը 1830-1914թթ. ժողովրդագրական և սոցիալական բնորոշումներ» ուսումնասիրությամբ:

Հեղինակն Օսմանյան վիճակագրությանն արժանահավատություն հաղորդելու համար թուրքական պատմագրության «բարի ավանդույթներին» համահունչ շարունակում է վիճարկել հայկական աղբյուրների, հատկապես Հայոց պատրիարքարանի տվյալների հավաստիությունը, օգտագործելով, մասնավորապես, անգլիական դիվանագիտական աղբյուրները: Ըստ նրա, Արևմտյան Հայաստանի վիլայեթներում գործող քրիստոնական ռազմական հյուպատոսները «կանոնավորապես մերժում էին Հայոց պատրիարքի վիճակագրությունը», որի նկատմամբ նրանք «մշտապես քննադատական մոտեցում էին ցուցաբերում»:[25]

Պատրիարքարանի թվերը, իսկապես, որոշ դեպքերում չէին ընդունվում անգլիացի դիվանագետների կողմից, սակայն Կարպատը «մոռանում է» նշել, որ Օսմանյան պաշտոնական վիճակագրության քննադատությունը շատ ավելի սուր էր, և այն մերժվում էր շատ ավելի վճռականորեն, քան հայկական տվյալները: Իսկ պատրիարքարանի տվյալները նույն այդ հյուպատոսների կողմից ոչ թե «մշտապես» քննադատության էին ենթարկվում, այլ, ընդհակառակ, շատ հաճախ արժանանում էին վստահության և ընդունվում էին որպես արժանահավատ: Մասնավորապես, իր, 1881թ. հուլիսի 11-ին Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Դաֆֆերինին ուղղված զեկուցագրում, «Քուրդիստանի և Թուրքական Հայաստանի հյուպատոս»[26] մայոր Հենրի Թրոտտերը, ում ինքն իսկ՝ Կարպատը բնութագրում է որպես «վիճակագրության և քարտեզագրության մեջ վարժված»[27] անձնավորություն, գրում էր, որ պատրիարքի վիճակագրական

աղյուսակները Էրզրումի, Բիթլիսի, Վանի ու Խարբերդի հայ բնակչության վերաբերյալ արժանահավատ են և, մեջբերում ենք, «իրականությունից ոչ հեռու»:[28] «Ես ուշադրությամբ քննել եմ վերջերս պատրիարքի կողմից ներկայացված թղթերը և չեմ գտել որևէ բան, ինչը կարող էր ստիպել ինձ փոխել իմ կարծիքը մահմեդականների և քրիստոնյաների հարաբերակցության վերաբերյալ, - շարունակում է նա: - Աղյուսակները խնամքով կազմվածի տպավորություն են թողնում: ... Արդարև, Պատրիարքարանի թվերն ավելի մանրամասն են և առավել ճշգրիտ, քան մեր տրամադրության տակ եղած ցանկացած որևէ այլ տվյալ»:[29] Նույն զեկուցագրում Թրոտտերը բողոքում է դեսպանին, որ «Դիարբեքիրի և հատկապես Խարբերդի քրիստոնեական տարրի պաշտոնական հաշվարկները նկատելիորեն թերի են»:[30]

Քանի որ 1844թ, օսմանյան պաշտոնական մարդահամարի տվյալները քաջածանոթ են պատմագիտական լայն շրջաններին, Կարպատը, որպեսզի խուսափի մեղադրանքներից ոչ պրոֆեսիոնալիզմի և բացահայտ կեղծարարության մեջ, հարկադրաբար ներկայացնում է դրանք, չփորձելով, սակայն, բացատրություն տալ այն փաստին, թե ինչպե՞ս, մինչև Բալկանյան պատերազմը Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական պաշտոնական տվյալների բնակվող 2400000 հայ բնակչությունից Բեռլինյան վեհաժողովի որոշումների տակ թուրքական ստորագրությունների թանաքը դեռ չչորացած մնացել էր 1100000-ը: Թեև պատմաբանը անցողիկ կերպով նշում է, որ 2400000 թիվը արտահայտում է նախապատերազմյան իրավիճակը, երբ Օսմանյան Թուրքիան դեռ չէր կորցրել Կարսը, Արդահանը և Բաթումը՝ թողնելով ընթերցողին ինքնուրույն հանգել այն սխալ եզրակացությանը, որ այդ անհետացած 1300000 հայությունն ապրում էր Ռուսաստանին անցած շրջաններում: Իրականում, Կարսի վիլայեթի բնակչությունն այդ ժամանակ կազմում էր 300000 մարդ, որից 1/3-ն էր (այսինքն՝ շուրջ 100000-ը) հայ:[31]

Հայկական հարցին վերաբերվող թուրքական պատմագիտության «գլուխգործոցներից» է Կամյուրան Գյուրունի «Հայկական թղթապանակը» ուսումնասիրությունը, ուր հանրագումարի են բերված հայագիտության ոլորտում թուրքական վերջին «նվաճումները»: Այն ունեցավ 4 հրատարակություն՝ թուրքերենով (1983, 1984, 1985 և 1988), 3 հրատարակություն՝ ֆրանսերենով (1983, 1984, 1985), 1985թ. գիրքը հրատարակվեց անգլերենով՝ միաժամանակ Նիկոսիայում, Լոնդոնում ու Նյու-Յորքում, և, վերջապես, 1993թ. Բաքվում լույս տեսավ նրա աղրբեջաներեն թարգմանությունը:[32]

Հեղինակն իր գրքի մի առանձին գլուխ նվիրում է հայ բնակչության թվաքանակի հարցին: Նյութը, ի տարբերություն Ուրասի, նա ենթարկել է որոշակի խմբավորման՝ նվիրելով ենթագլուխներ հայկական, եվրոպական, և վերջում, իհարկե, օսմանյան աղբյուրներին: Սակայն, օրինակ, ներկայացնելով հայկական աղբյուրները, ի թիվս իսկապես աղբյուրագիտական նշանակություն ունեցող Հայոց պատրիարքարանի և Գրիգոր Զոհրապի վիճակագրական տեղեկությունների, պատմաբանը զետեղում է և անթույլատրելի կերպով համեմատում է դրանց հետ ժամանակակից սփյուռքահայ պատմաբան Ռ. Հովհաննիսյանի ածանցյալ նշանակություն ունեցող հաշվարկները:

Նույն շփոթն է տիրում գրքի եվրոպական աղբյուրներին նվիրված

ենթագլխում: Բառացիորեն հետևելով Ուրասին՝ հեղինակը կրկնում է նրա սխալը, կողք կողքի համեմատման կարգով ներկայացնելով դը Կոնստենսոնի, Թոզերի, Փրայզի, Փաուելի, Լինչի, Քինեի և անգամ ժամանակակից պատմաբան Ուոքերի տարբեր տարիների և տարբեր տարածքային միավորների համար կատարված հաշվարկները:

Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ եվրոպական տվյալները Գյուրունը, թուրքական այլ պատմաբանների օրինակով, օգտագործում է ընտրողաբար և մասնակիորեն, կասկածանքի տակ առնենք ընդհանրապես օտարերկրյա դիվանագետների և ճանապարհորդների տեղեկությունները՝ հայ ժողովրդի վիճակագրության ուսումնասիրության համար որպես ինքնուրույն և առաջնահերթ նշանակություն ունեցող սկզբնաղբյուրներ լինելու փաստը:

Արևմտյան ուսումնասիրողները, որոնք ճանապարհորդություններ էին կատարում Թուրքահայաստանով, իհարկե ո՛չ հնարավորություն և ո՛չ էլ նպատակ ունեին կատարել հարցի քիչ թե շատ խորը հետազոտություն: Նրանք, որպես հիմք ընդունելով տեղական սալնամեների վիճակագրական աղյուսակները, սահմանափակվում էին դրանց որոշակի սրբագրումով, ճանապարհորդության ընթացքում հավաքած սեփական կցկտուր տվյալներին և անձնական տպավորություններին համապատասխան: Մասնավորապես, Գյուրունի կարծիքով արևմտյան հեղինակներից հարցը «առավել հիմնովին ուսումնասիրած»[33] անգլիացի Լինչի և ֆրանսիացի Քինեյի թվերը, համապատասխանաբար 1058000՝ 1896թ. (Թուրքահայաստանի համար) և 1181066՝ 1892թ. (Ասիական Թուրքիա), կրում են թուրքական պաշտոնական վիճակագրության ճնշող ազդեցությունը: Ինքը՝ Լինչը, նշում է, որ Էրզրումի, Բիթլիսի և մասամբ Վանի վիլայեթների վիճակագրական աղյուսակները կազմելիս թվերը նա վերցրել է օսմանյան պաշտոնական տվյալներից և տեղ գտած թերհաշվառման սխալները շտկելու համար հարկավոր է այդ թվերին ավելացնել մեծ տոկոս:[34]

Երբ Լինչը կատարում է իր հաշվարկները, հիմնվելով անձնական տպավորությունների վրա, պատկերը բոլորովին այլ է: Օրինակ, խոսելով Վանի վիլայեթի բնակչության մասին, նա գրում է, որ այնտեղ «հայերը, մահմեդական բնակչության թվաքանակին համեմատ, մեծ ուժ են կազմում»: «Եթե վերցնենք վիլայեթն ամբողջությամբ, - շարունակում է նա, - ապա նրանք 1/3-ով գերազանցում են մահմեդական բնակչությանը: Վան քաղաքում մահմեդականների և հայերի հարաբերակցությունը, մոտավորապես, մեկը երկուսի է»:[35]

Ինչ վերաբերվում է 19-րդ դարի վերջի Օսմանյան վիճակագրության ամենահայտնի ուսումնասիրողի համբավը վայելող Վիտալ Քինեի տեղեկություններին, ապա դրանք ևս չունեն ինքնուրույն աղբյուրագիտական նշանակություն, քանի որ, ինչպես ակամա խոստովանում է ինքն իսկ՝ Կարպատը, Քինեն, ինչպես և «առավել արժանահավատ» այլ եվրոպական հեղինակները «հիմնում էին իրենց աշխատությունները Օսմանյան պաշտոնական տվյալների վրա»:[36] Ինքը Քինեն, օգտագործելով թուրքական վիճակագրությունը, միաժամանակ քննադատում է այն, նշելով, որ «մարդահամարի այնքան օգտակար և հետաքրքրական գիտությունը ոչ միայն մուտք չի գործել Թուրքիայի սովորությունների ու բարքերի մեջ, այլև իշխանությունները գիտակցաբար մերժում են այն: Բուն պաշտոնական մարդահամարը բացարձակապես թերի է Թուրքիայում»:[37] Սփյուռքահայ պատմաբան Սարգիս Կարաջյանի հաշվումներով Քինեյի տվյալները 50-60 %-ով նվազ են իրական թվերից:[38]

Այսպիսով, նվազեցնելով նախապատերազմյան հայ բնակչության իրական թիվը, թուրք և թուրքամետ պատմագրությունը երկու նպատակ է հետապնդում՝ արժեզրկել հայ ժողովրդի Արևմտյան Հայաստանի նկատմամբ պահանջատիրությունը և այն հիմնավորող փաստարկները, կեղծ վիճակագրությունն օգտագործել որպես ցեղասպանության ժխտման ևս մեկ փաստարկ: Այսուհանդերձ, ճշմարտությունը երբեմն ի հայտ է գալիս որոշ թուրք հեղինակների երկերում: Օրինակ, Օսմանյան կայսրության պետական ծառայության մեջ իրենց դրսևորած հայերին նվիրված ուսումնասիրության մեջ թուրք պատմաբան Չարկը, վկայակոչելով ոմն եվրոպական աղբյուր, նշում է, որ 1897թ. երկրում հայերի թիվն անցնում էր 2400000-ից:[39]

Թուրքական մի այլ պատմաբան՝ պրոֆ. Ակգյունը «Հյուրրիեթ» թերթում 1987թ. ապրիլի 27-ին տպագրված իր հարցազրույցում նշում է, որ թեև ներկայումս հրապարակում առկա են տարբեր իրարամերժ թվեր, սակայն, իր կարծիքով, հարցի վերաբերյալ ամենաարժանահավատ տվյալները տալիս է հայ պատմաբան Բասմաջյանը, ըստ որի նախապատերազմյան Թուրքիայում ապրում էր 2380000 հայ: «Թիվը պետք է լինի երկու-երեք միլիոնի արանքում», - եզրակացնում է նա:[40]

Ամփոփենք. 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում Հայկական հարցի միջազգայնացմամբ Օսմանյան կայսրության հայ բնակչության վիճակագրությունը դարձավ քաղաքական շահարկումների առարկա: Այդքանով իսկ նվազեցման միտում ունեին և՛ սուլթանական կառավարության կողմից, ինչը բնական է, և՛ եվրոպական դիվանագիտության, և՛, ինչու չէ, նաև Հայոց պատրիարքարանի կողմից շրջանառության մեջ դրված թվերը: Ուսումնասիրողի նպատակը պետք է լինի՝ բացահայտել, վեր հանել նշված շրջանակների ժողովրդագրական-վիճակագրական թվախաղի քաղաքական, տնտեսական դրդապատճառները և տալ այդ խնդրի իրական պատկերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] McCarthy Justin. Armenian t errorism: History as a Poison and Antidote, Newspot Turkish Digest (May 11, 1984), p. 6.

[2] Տես՝ Լևոն Վարդան. Հայկական տասնհինգը թուրք մատենագիտութեան և մամուլին մէջ և մենք, Պեյրութ, 1998, էջ 69:

[3] Խաչանասյան Ե. Հայոց թիվը, Բոսթոն, 1965, էջ 8:

[4] Տես՝ Убичини М. А. Изображение современного состояния Турции в географическом, статистическом, религиозном и военном отношениях, СПб, 1853.

[5] Саркисян Е. К. Административная и демографическая политика Османского правительства в Западной Армении. В сб. Страны и народы Ближнего и Среднего Востока, т. V, Турция, Ереван, 1970, стр.367.

[6] Համբարյան Ա. Ազգարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան ,1965, էջ 43:

[7] Ճակատագրական պայմանագրեր, ժողովածու, կազմեց Ազատյան Հ. Գ., Երևան, 1998, էջ 60:

[8] Dadrian Vahagn N. Warrant for Genocide, New Branswick. New Jersy, USA, 1999, p. 173.

[9] Küçük Cevdet. The Armenian Population in Anatoliain the Nineteenth Century, in The Eastern Question: Imperializm and the Armenian Community, Ankara, 1987, p. 79.
[10] Dadrian Vahagn N. նշվ աշխ., էջ. 173.
[11] Ղդեյան Ա., Ղդեյան Ս. Հարազատ պատմություն Տարոնո, Կահիրե, 1962, էջ 22:
[12] Gürün Kamuran. The Armenian File, The mith of Innocence Exposed, N.Y., 1985, p. 86.
[13] Նույն տեղում:
[14] Uras Esat. Tarihte Ermeniler ve Ermeni meselesi. Ankara, 1950. Մեջբերումներն ըստ անգլերեն հրատարակության՝ Esat Uras,The Armenians in history and the Armenian Question, Ankara, 1988.
[15] Ibid, p. 357
[16] Ibid, pp. 356-357
[17] Gökbilgin T. Milli mücadele baslarken. Mondros mütarekesinden Sivas kongresine. Birinci kitap. Ankara, 1959. Kocas Sadi, Tarih boyunca Ermeniler ve Turk-Ermeni iliskeleri, Ankara, 1967. Այս աղբյուրներից մեր հետազա մեջբերումներն ըստ՝ Новая и новейшая история Армении в трудах современных зарубежных авторов, Ереван, 1993.
[18] Новая и новейшая история Армении.., стр. 27
[19] Там же,
[20] Սահակյան Ռ. Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 288:
[21] Новая и новейшая история Армении.., стр. 27.
[22] Саркисян Е. К. Административная и демографическая политика Османского правительства в Западной Армении. В сб. Страны и народы Ближнего и Среднего Востока, т.V, Турция, Ереван, 1970, стр.371
[23] Hovhannisian Richard G. Denaial of the Armenian Genocide, Australia, 1997, p. 37.
[24] Shaw Stanford J. and Kural Ezel. History of the Ottoman empire and Modern Turkey, vol. 2, N.Y. 1977, pp. 315-316.
[25] Karpat Kemal H. Ottoman population 1830-1914, The University of Wisconsin Press, 1985, pp. 52-53.
[26] Dadrian, նշվ. աշխ., էջ172:
[27] Karpat, նշվ. աշխ., էջ.53:
[28] Dadrian, նշվ. աշխ., էջ 172:
[29] Նույն տեղում:
[30] Նույն տեղում, էջ 173:
[31] Саркисян. Указ. соч. стр. 363.
[32] Տես՝ Լևոն Վարդան. նշվ. աշխ., էջ 115:
[33] Gürün, նշվ աշխ., էջ84.
[34] H. F. B. Lynch. Armenia. Travels and Studies, vol. 2 The Turkish provinces. N. Y. 1988, p. 413.
[35] Новая и новейшая история Армении.., стр. 28.
[36] Karpat, նշվ աշխ.,էջ IX.
[37] Հովհաննիսյան Պ. Հ. Նիկողայոս Ադոնցը և Հայկական հարցը, ՊԲՀ, 1999 N 1, էջ 137:
[38] Karajian Sarkis J. An Inquiry Into the Statistics of the Turkish Genocide of the Armenians 1915-1918, The Armenian Review 25 (Winter 1972), p. 9.
[39] Çark Y.G. Türk Devleti Hizmetinde Ermeniler 1453-1953, Istanbul, 1953, p. 240.
[40] Marashlıan. Politics and Demography. Armenians, Turks, and Kurds in the Ottoman Empire, Cambridge, MA, 1991, p. 38.

Резюме

Вопрос численности армян в Османской империи накануне Первой мировой войны в турецкой историографии.

Роберт Татоян

В статье анализируются основные тенденции освещения турецкой историографией вопроса о численности армян в Османской империи накануне Первой мировой войны. Преуменьшая численность предвоенного армянского населения Западной Армении турецкие историки используют фальсифицированные данные в качестве одного из основных доводов планомерной кампании отрицания Геноцида 1915 года. В статье доказана несостоятельность аргументов турецких историков (Э. Урас, С. Кочаш, Т. Гекбилгин, К. Гюрун, К. Карпат и др.), которые путем выборочного привлечения некоторых предвзято настроенных зарубежных дипломатических источников пытаются обосновать основанные на фальсификациях данные, проведенных султаном Абдул-Гамидом II, а затем и младотурецким правительством так называемых переписей населения, в которых численность армян в Османской империи представлена 2,5-3 раза ниже их реального числа.

Summary

Question of Number of the Armenians in Ottoman Empire on the Eve of the First World War in Turkish Historiography.

Robert Tatoyan

In the article the basic tendencies of lighting by Turkish historiography of a problem about number of the Armenians in Ottoman Empire on the eve of the First World War are analyzed. By diminishing the number of pre-war Armenian population of Western Armenia Turkish historians use the forged data as one of the basic arguments in systematic campaign of denial of genocide of 1915. The author shows insolvency of arguments of the Turkish historians (E. Uras, S. Coćaş, T. Gökbilgin, C. Gürün, K. Karpat etc.), which by selective engaging of some prejudicedly tuned foreign diplomatic sources attempt to justify the data, based on falsifications, conducted by the sultan Abdul Hamid II and then by Young-Turk government of so-called population censuses, in which the number of the Armenians in Ottoman Empire is presented 2,5-3 times below than their substantial number.